Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 12.03.2021թ. թիվ 2112394636 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<07>>04 2021թ. 7-13- 5745 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Արթուր Եղիազարյանի ՄԴ/25864-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ա.Ավետիսյան փողոցի 67-րդ շենքի 67-րդ բնակարանի բնակիչ Արթուր Եղիազարյանը դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112394636 որոշմանը՝ նշելով, որ տրանսպորտային միջոցը կանգնեցրել է հետիոտնային անցման վրա մի քանի վայրկյան, որն խոչընդոտ չի առաջացրել երթևեկության մասնակիցների համար, ուստի տվյալ դեպքում կատարված արարքը ունի նվազ նշանակություն, վկայակոչելով մի շարք օրենքներ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը,որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28 հունիսի 2007 թվականի թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ **կանգառն արգելվում է հետիոտնային անցումների վրա** և շարժման ուղղությամբ հետիոտնային անցումից առաջ՝ 5մ մոտ վայրում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասի համաձայն, տրանսպորտային միջոցների վարորդների կողմից տրանսպորտային միջոցը հետիոտնային անցման վրա կանգնեցնելը, առաջացնում է

տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112394636 որոշման հիմքում դրված իրավախախտումն ամրագրած տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունից հստակ երևում է, որ Երևան քաղաքի Շահումյան-Սեբաստիա փողոցների խաչմերուկի հատվածում դիմումատուին պատկանող <<LEXUS>> մակնիշի 700OS07 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 20.02.2021թ-ին ժամը 16:57-ին, տրանսպորտային միջոցը կանգնեցրել է հետիոտնային անցման վրա:

Տվյալ իրավախախտման համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար նույն հոդվածով նախատեսված չէ արարքի նվազ նշանակություն ունենալու որևէ պայման (կանգառի տևողություն, ուղևոր նստեցնել կամ իջեցնելու նպատակով կանգառ կատարել, դիտավորություն, անզգուշություն և այլն):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

<u>Ո Ր Ո Շ Ե Ց Ի</u>

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 12.03.2021թ. թիվ 2112394636 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արթուր Եղիազարյանին:

Ե.Կարապետյան

Կատարող՝ Հ.Կարապետյան
Հեռ. 011544783